Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«24»__օգոստոսի__2021 թ. թիվ 159 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
_____Ա. Սարգսյան

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԴԵԿԱՆԱՏԻ՝ 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի դեկանատը Կենտրոնին վերապահված մասնագիտությունների գծով մագիստրոսական կրթության մակարդակում և ուսուցման առկա և հեռակա ձևերով ուսումնական գործընթացների կազմակերպումն ու իրականացումն ապահովել է՝ համապատասխան ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ դեկանատի գործունեության կանոնակարգի, ինչպես նաև՝ դեկանատի 2020-2021 ուսումնական տարվա աշխատանքային պլանի՝

2020-2021 ուստարում դեկանատն իրականացրել է աշխատանքներ՝

- Կրթական ծրագրերով նախատեսված դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների պատշաճ անցկացման վերահսկման ուղղությամբ:
- Դասացուցակների ստեղծման և համակարգման ուղղությամբ:
- Քննականան ժամանակացույցերի հաստատման և տարածման ուղղությամբ:
- Ամբիոնների ստուգարքային, քննական տեղեկագրերի, քննաթերթերի հաստատման ուղղությամբ:
- Ամբիոններում պարբերական դասալսումների իրականացման, դասապրոցեսի մշտադիտարկման, այդ թվում՝ հեռավար հարթակի մշտադիտարկման ուղղությամբ:

- Ուսանողների ինքնակառավարման ներկայացուցչական մարմինների հետ համագործակցության ուղղությամբ:
- Սահմանված կարգով ուսանողներին կրթաթոշակ (այդ թվում նաև անվանական) նշանակելու, վճարովի համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի զեղչման, ուսանողական նպաստների հատկացման աշխատանքների համակարգման ուղղությամբ:
- Միջամբիոնային համագործակցության և սեփական գործառույթներից բխող այլ ուղղություններով:

Հաշվետու ուսումնական տարում վերանայվել են ամբիոնների առարկայական ծրագրերը և հաստատվել են նորացված ուսումնական պլանները (հիմք՝ հաստատված նոր ուսումնական պլաններ):

Ըստ կիսամյակների՝ համակարգողներից հավաքագրվել, հաստատվել և տարածվել են կիսամյակային դասացուցակները (հիմք՝ ցուցատախտակին փակցված դասացուցակներ, դրանց առկայությունը էլեկտրոնային դեկանատում և Կենտրոնի պաշտոնական կայքէջում):

Կիսամյակային եզրափակիչ քննությունները սկսվելուց առնվազն 7 օր առաջ համակարգողներից հավաքագրվել, հաստատվել և տարածվել են քննական ժամանակացույցերը (հիմք՝ Կենտրոնում՝ տեսանելի վայրում փակցված և Կենտրոնի պաշտոնական էլկայքում զետեղված ժամանակացույցեր):

Ըստ քննական ժամանակացույցերի հաստատվել են ամբիոնների ստուգարքային, քննական տեղեկագրերն ու քննաթերթերը (հիմք՝ ամբիոններում ստուգարքային, քննական տեղեկագրերի, քննաթերթերի առկայությունը՝ ըստ համապատասխան կրթական ծրագրի):

Հաշվետու ուստարում դասընթացների առավելապես հեռավար ձևաչափով անցկացման փաստից ելնելով՝ դասալսումները հիմնականում իրականացվել են հեռավար հարթակի մշտադիտարկման միջոցով (հիմք՝ մշտադիտարկման արդյունքների մանրամասն վերլուծություն):

Հանրային կապերի և կարիերայի բաժնի, ՈւԽ, ՈւԳԸ-ի հետ համատեղ կազմակերպվել են կուրսերի ավագների ժողովներ, հանդիպում-քննարկումներ,

ամառային դպրոցներ (հիմք՝ ժողովների, հանդիպում-քննարկումների արձանագրությունները, ամառային դպրոցների մասնակիցներին շնորհված հավաստագրերը):

Հավաքագրվել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն և Կենտրոնի մագիստրոսական նպաստներ հատկացնելու հարցերի հանձնաժողովին են ներկայացվել ուսումնական նպաստներից օգտվող, անվանական կրթաթոշակի հավակնող ուսանողների տվյալները (հիմք՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ մագիստրոսական նպաստներ հատկացնելու հարցերի հանձնաժողովի նիստերի արձանագրություններ, ԿԳՄՍ նախարարություն ներկայացված ցուցակներ):

Կենտրոնի հավատարմագրման գործընթացի շրջանակներում մշակվել է համապատասխան զեկույց, որը մաս է կազմել Կենտրոնի ամբողջական զեկույցի (հիմք՝ Հավատարմագրման համար ներկայացված զեկույցը), ակտիվ մասնակցություն է ցուցաբերվել Կենտրոնի հավատարմագրման ողջ գործընթացին:

Էրազմուս + կարողությունների զարգացման ԱՐՄԴՈԿՏ ծրագրի շրջանակներում ստացվել են համապատասխան տեխնիկական միջոցներ, կահավորվել և զինվել է առանձին լսարան, ծրագրում ներգրավվել են տարբեր ամբիոնների ներկայացուցիչներ, որոնք մասնակցել են աշխատաժողովների (հիմք՝ ծրագրի էլկայքը, լսարանի առկայությունը):

Դեկանատի կողմից իրականացված միջացառումները լուսաբանվել են, ապահովվել է հանրային հրապարակայնություն և թափանցիկություն (հիմք՝ Կենտրոնի էլկայք, սոցիալական ցանցերի էջեր, խմբեր):

Դեկան՝ Ա. Մխիթարյան